ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1964 Общественные науки

Ա. Գ. Գամազելյան

ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

1836 թ. ցարական կառավարության ընդունած կանոնադրություն, որը հայտնի էր «Պոլոժենիե» անունով, բավական արտոնություններ սահմանեց հայ կրթական օջախներ ստեղծելու համար։ Պարսկական տիրապետության համեմատությամբ, դա մի առաջընթաց էր։ Սակայն «Պոլոժենիեն» դպրոցները բացելու իրավունքն արտոնում էր միայն եկեղեցիներին ու թեմերին կից լինելու պայմանով։ Երբ կրթական գործը այս կամ այն չափով որոշ հունի մեջ մտավ, գործող ծխական ու թեմական հատ ու կենտ հոգևոր սեմինարիաները (թեմական հոգևոր դպրոցներ), ուսումնածարավ ժողովրդի պահանջները չէին կարող բավարարել։ 1850—60-ական թվականներին հայ ռեալիստական դեմոկրատ Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ս. Շահազիզը և մյուս մտավորականները մայր դպրոցի պահանջ էին առաջ քաշում։ Այդ մայր դպրոցը հանդիսացավ Գևորգյան ճեմարանը, որը «Պոլոժենիեի» սահմանած իրավունքներից դուրս գալու համար նույնպես կոչվեց հոգևոր դպրոց։ Ճեմարանը հիմնադրվեց 1874 թ. սեպտեմբերի 28-ին։ Այն իր կանոնադրության հիմքում ուներ՝ ընդունել բացառապես աղքատ ընտանիքի զավակներին սկզբունքը, որը ինքնըստինքյան, առաջադիմական քայլ էր։ Հիմնադրումից մինչև 1878 թ. նա գործեց նորմալ ընթացքով և դա միակ ժամանակաշրջանն է, որ կարելի է համարել հանգիստ տարիներ։ Բայց 1878 թ. փետրվարի վերջին ճեմարանում տեղի ունեցավ առաջին խռովությունը, որը ցնցող տպավորություն թողեց ճեմարանի հիմնադիր Գևորգ 4-րդ կաթողիկոսի վրա։ «Այս երկրորդ հարվածը նույնչափ ծանր էր ճեմարանի համար, որչափ առաջին տարվա հրդեհը»։

Աշակերտական անդրանիկ շարժումը խեղդելու փորձեր արվեցին, բայց ապարդյուն. այն շարունակվեց։ Դպրոցի ղեկավարությունը և վանքի միաբանությունը որոշեցին փակել 5-րդ դասարանը, իսկ մյուս աշակերտներին խռովությունից հեռու պահելու նպատակով հանձնարարում էին կիրակի օրերը՝ զբաղվել ննջարանների հարդարմամբ ու մաքրությամբ, մյուս օրերին՝ դասերով ու մայր տաճարում տեղի ունեցող եկեղեցական արարողություններով։ Ստացվում էր այնպես, որ աշակերտը շունչ քաշելու ժամանակ չուներ։ Կիրառվող դաժանությունը կատարյալ դարձնելու համար 1879 թ. մարտի 2-ին մանկավարժական խորհրդում ճեմարանի ուսուցիչ Խորենն վարդապետ Ստեփանեն առաջարկ մտցրեց դպրոցում ուսանալ կարցեր (բանտ)՝ զանցառուներին պատժելու համար։

1880 թ. բացվեց լսարանական բաժին։ Նախկին ուսուցիչները իրենց ցածր պատրաստականությամբ դժգոհություն առաջ բերեցին նորաբաց լսարանի ուսանողների մեջ։ Այդ պատճառով վանքի միաբանության մեջ եղած անհամաձայնությունները, ճեմարանում սկսված խլրտումները նորից ջրի երես գուրս եկան, երբ 1882 թ. դեկտեմբերի 6-ին մահացավ ճեմարանի հիմնադիրը։

Կաթողիկոսի թաղման 7-րդ օրը դեռ չլրացած, որոշվում է 29 «ըմբոստացյալներից» 13-ին ճեմարանից հեռացնել, իսկ 16-ին տարբեր պատիժներ տալուց հետո թույլ տալ դասերին մասնակցել՝ պայմանով, որ ամենափոքր զանցանքի դեպքում կվտարվեն։

1883 թ. հունվարի 13-ին վերատեսուչ Նահապետյանը հաղորդում է մանկավարժական խորհրդին, որ աշակերտները բողոքել են վերակացու Արտաշես Սուքիասյանի դեմ այն բանի համար, որ նա հաճախ հարբեցնում է աշակերտներին, հրահրում միմյանց դեմ ու տեղիք տալիս անկարգություններին։ Աշակերտները բողոքել էին, որ Սուքիասյանը հանցավոր կերպով լրտեսում է լավագույն ուսանողներին, հաճախ գողանում մտնում ննջարանները, բացում նրանց ստացած նամակները և այլն։

Վերատեսուչը այդ հարցին միակողմանի նայելով, պահանջում է ժողովից բողոքող աշակերտներին, որպես ըմբոստացողների, պատժել։ Անարդարացի վճիռը և արհեստական մեղա-

---

1 *Արարատ, էջմիածին, 1899 թ. հոկտեմբեր, էջ 316։*

դրանքները չէին կարող անպատասխան մնալ։ Շատ ուսանողներ ինքնակամ հեռանալու խնդրագիր են ներկայացնում։ Ինքնակամ հեռացումների կամ վարչության կողմից կատարվող վտարումների արմատական պատճառները ամփոփված են ուսանողների կողմից ներկայացված մի դիմումի մեջ, որի տակ ստորագրել են 28 հոգի։ Նրանք բողոքում են, որ Նահապետյանը միանձնյան է, ինչպես ցանկանում է, այնպես էլ տնօրինում է սովորողների բախտը։ Ցկա անհատական և արդարացի մոտեցում, ստեղծվել են ստրկական պայմաններ, որոնց դիմանալ չեն կարող։ «Վարչություն ասելով հասկանում ենք արժանապատիվ Նահապետյանին, որի մեջ է մարմնացած ամբողջ կանոնադրությունը, իսկ մյուս անդամները լիովին կախում ունեն նրա կամքից, նրա կամքն է ճեմարանի օրենսգիրքը»[2]։

Բողոքողները վարչության բռնած ուղին համարում են հակամանկավարժական, որովհետև դրանով արգելակվում է աշակերտների բնավորության ինքնուրույն զարգացումը։ Սովորողներից մյուր հնազանդություն են պահանջում՝ «վարչությունը միշտ չէ կամեցել ընդունել, թե նոքա կամք ու զգացմունք ունեն»[3]։

Աշակերտներին թույլ չէր տրվում կարդալու լրագիր կամ այլ գրականություն, շատերի վրա նայում էին իբրև անբարեհույսների, ոմանց վիրավորում անտեղի դիտողություններով, իսկ պաշտոնյաներին՝ անհիմն հովանավորում։ «Վարչությունը կամայականությամբ և կեղծությամբ է վարվել աշակերտների հետ, ոմանց դիտողություններ մատուցանելով, ոմանց իզուր վնասելով և միշտ պաշտպանել է իր պաշտոնյաներին, երբ սոքա աշակերտյալների հետ ունեցած ընդհարման միջոցին անարդար են գտնվում։ Վարչությունը ջանացել է լրտեսներ ունենալ աշակերտների մեջ, միշտ այդպիսիներին որոնելով ոչ խրախուսելով»[4]։

Գևորգ դ. կաթողիկոսի ճանաչած «Փրկության փարոս» Արշակ Նահապետյանի վարքագիծը բացահայտում է նաև մի այլ փաստաթուղթ, որը գրել են 34 ուսանողներ՝ ուղղված սինոդին։ 18 էջից բաղկացած այդ բողոքագրի մեջ մանրամասն վերլուծման են ենթարկված տեսչի գործունեությունը, նրա նշանակման օրից, մինչև 1883 թ. վերջը։ Դիմումը սկսվում է հետևյալ տողերով. «Ամսույս 11-ին, երեկոյան ժամը 6-ին ճեմարանի վերին սերտարանում մի աղմուկ պատահեց, որի պատճառը տեսուչ պ. Նահապետյանի ունեցած հարաբերություններն էին 6-րդ դասարանի աշակերտ Սարգիս Միրզոյանի հետ։ Միրզոյանը զրգռված տեսչի հետ ունեցած վատ վարմունքից և ծայրահեղ հուսահատության հասած, իրեն կորցնելով, կատաղած հարձակվում է տեսչի վրա և մի հարված է տալիս»[5]։

Նման փոխհարաբերությունները խոսում են այն մասին, որ ստրկացնող միջոցառումները նպատակին չեն ծառայել։ XIX դ. հայկական առաջին բարձրագույն դպրոցում (թեև կոչվել է հոգևոր դպրոց), որտեղ դասավանդվել են կրոնական առարկաներ, քարոզվել իստագույն հնազանդություն, ստրկամիտ խոհեմություն, քրիստոնեարար ենթարկվելու մտայնություն, այնուամենայնիվ առաջավոր դատողությունները, կամքի ազատությունը, մարդու ազատատենչ ոգին մնացել են անկաշկանդ։

Նախկին շրջանավարտներից շատերը սովորելով Ռուսաստանի կենտրոնական քաղաքների, Եվրոպայի և հատկապես Գերմանիայի համալսարաններում, ավարտել և վերադարձել էին ճեմարան որպես դասախոսներ։

Դասախոսական նոր կազմը իր հետ ընդհանուր թարմությունից բացի, բերել էր նաև առաջավոր մտքեր, որոնք ուղղակի թե անուղղակի ճանապարհով անցնում էին ուսանողներին ու աշակերտներին։

Հայ իրականության մեջ նորի դրոշակակիրներն էին լիբերալները, հանձինս «Մշակի» և մշակականների, իսկ հին՝ «նոր դարը» կամ նորդարականները։

1890-ական թվականները լի են աշակերտական խռովությունների բազում փաստերով, որոնք բոլոր պարագաներում զուգադիպել են ղեկավարության ռեակցիոն գործունեության դեմ ուղղված հասարակական շարժումներին։ Տեսուչի օգնական Սաղաթելյանի ղեկավարության շրջանում տեղի ունեցած ըմբոստությունները կրել են ավելի մասսայական բնույթ և պատժվել ամենայն անողոքությամբ, որովհետև Սաղաթելյանը պահպանողական էր և խիստ ռեակցիոն։ Օրինակ՝ 1894 թ. դեկտեմբերին վերատեսուչ Կ. Կոստանյանի կողմից Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսին գրած հայտարարությունից երևում է, որ դեպքերը խմորվում էին՝ սնունդ առնելով

---

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 57, Ամենայն հայոց կաթ. դիվան, գործ 455, թղթ. 9։

3 Նույն տեղում։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 46, Ամենայն հայոց կաթ. դիվան, գործ 455, թղթ. 9։

5 Նույն տեղում, ֆ. 312, թղթ. 56. վավ. 5։

հասարակական միջավայրից, ինչպես ինքն է գրել՝ «արգասիք են արտաքին սադրողաց, չարակամությամբ ատելություն վարելոց առ առաջադիմություն ճեմարանիս և փոխտեսչիս»[6]։ 1894 թ. նոյեմբերի 24-ի խոովությունը տևեց մի քանի օր։ Այդ խոովության առիթը եղավ աշակերտ Վաղարշակ Արշակունու հանկարծակի հիվանդությունը։ «Հակառակ հրամանի օգնականին, տեսչին և դաստիարակաց ոչ կամեին նստել յուրաքանչյուր ի տեղիս և պարապել դասաց, զառիթ հուզման և զհանկարծական հիվանդություն աշակերտի Գ. դասարանի Արշակունվոյ ընելով»[7]։

Այնուհետև Զ. դասարանցիներին հն միանում մյուս աշակերտները, սպառնում ուժով ներս մտնել օգնականի ու տեսչի բնակարանը։ Նրանք պահանջում են հայտնել Արշակունու հիվանդության պատճառները։

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցած խոովությանն անմիջապես հաջորդում է նոյեմբերի 27-ի նույնանման դեպքը, որը ավելի ուժգին էր, քան նախորդը։

«Ըմբոստացյալք համարձակեցան խուռն ամբոխիվ խուժել ի դավիթս վեհարանի և հակառակ որոշման և կարգադրության, նորին սրբության, գանկոծել սպասավորս և հայհոյական բանս ուղղելով, առ բազումս ի միաբան վանիս»[8]։

Եթե 80-ական թվականների խոովությունների համար հիմք էին հանդիսանում դասախոսական կազմի ակադեմիական թույլ պատրաստականությունը, տեսուչների, վերակացուների ոչ վայելուչ վարմունքը, ապա այժմ ճեմարանում էին աշխատում պատրաստված դասախոսներ՝ Հովհաննես Տեր-Միրաքյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Մինաս Բերբերյանը, Վարդան Արովյանը, Սեթ Հարությունյանը, Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գևորգ Զորեքչյանը, Տիգրան Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ։ Մի քանի տարի հետո ճեմարանում սկսեցին աշխատել նաև Մանուկ Աբեղյանը, Ստեփան Կանայանը, Գարեգին Հովսեփյանը և ուրիշներ, որոնք բոլորն էլ ավարտել էին Ռուսաստանի կամ արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Ուրեմն դժգոհությունների պատճառները պետք է որոնել երկրում հասարակական շարժումների աճի և գաղափարական նոր խմորումների մեջ։ Այս առիթով Հովհաննես Հովհաննիսյանի ունեցած ելույթից երևում է, որ

1. Աշակերտները ոչ հաճեն ծրագիր ճեմարանիս.

2. Վարչություն խիստ թուվի յաչաց նոցա և նոքա հաճեին անհատական ազատություն.

3. Որպես մարթ է դուշակել հարկադրելոցն ընթեռնուլ զեկեղեցական մատենագիրս նախնեաց»[9]։

Աշակերտներն ու ուսանողները չէին կարողանում համակերպվել ճեմարանի ներքին ծրագրին (կանոնադրությանը)։ Քարացած կանոնները հոգնեցրել էին նրանց, անտանելի էին դարձել ամենօրյա աղոթքներն ու աստծու փառաբանումները։

Հիշյալ օրենքները անվիճելի էին թվում դասախոսական կազմի որոշ մասին, որը ուսանողների ամենափոքր դիմադրությունը համարում էր սրբապղծություն և պատժում դաժանությամբ։ Օրինակ, դասախոս Քարամյանը գանում էր, «որ ինքնակամ հեռացված աշակերտները ոչ պահեին պատշաճավոր հարգանս առ վարչությունս»[10]։ Իսկ Մինաս Բերբերյանի նման խելամիտ մարդը ասում էր, թե «Ավելորդ համարիմ զդարձ նոցա, նույնիսկ վտանգավորս, զուցե կամին նորանոր խոովությունս հարուցանել»[11]։

Հասարակական շարժումները Ռուսաստանում և Անդրկովկասում իրենց զգացնել էին տալիս։ Առաջադեմ ինտելիգենցիան և ուսանողությունը երևույթներին մոտենում էին կշռադատաբար, ոմանք սկսել էին լիբերալ մտայնությունից վեր բարձրանալ։ Ուսանողներից շատերին չէին բավարարում «Մշակի» արծրունյան գաղափարները, նրանք կարդում էին ավելի առաջադիմական թերթեր, նոր թարմ գրականություն։ Սոցիալ-դեմոկրատական գաղափարների բարբերար ազդեցությունը արտահայտվում էր նաև այս հնռավոր անկյունում։ Ճեմարանից Ռուբեն Դաշտոյանի հեռացման կապակցությամբ նրա հոր՝ Պետրոս Դաշտոյանի նամակը ուղղված ճեմարանի վերատեսուչ Կարապետ Կոստանյանին, իսկական վկայություն է, որ սոցիալ-դեմոկրատական գաղափարները արդեն մուտք էին գործել կղերական զրահով պատած ճեմարանից ներս։ «Այդ բոլորը կուսակցության պտուղներն են, որ մենք վայելեցինք և գնում ենք դեպ-

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 56, ցուցակ 315, թղթ. 15։

7 Նույն տեղում, ցուցակ 3, թղթ. 2։

8 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 56, ցուցակ 3, վավ. 179, թղթ. 2։

9 Նույն տեղում։

10 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 26, վավ. 17։

11 Նույն տեղում։

կորուստը, բայց մինչև երբ պետք է այդ անբախտությունները կրենք հայտնի կուսակցության ներքին, չգիտեմ...»[12]:

Ռուբեն Դաշտոյանի հայրը այն ժամանակ աշխատում էր Ջալալօղլու փոստում: Այս միամիտ տողերը փոստային մանր աստիճանավորի մտքի արգասիքն է: Նրան ամեն մի նոր գաղափար կորստաբեր էր թվում: Այստեղից երևում է, որ Ռուբեն Դաշտոյանը հարում էր կուսակցությանը, իսկ այդ կուսակցությունը սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը միայն կարող էր լինել:

Մեր կարծիքով ճիշտ չէր լինի, եթե ճեմարանի ներսում սկսված աշակերտական նոր շարժումները դիտենք որպես լոկ ներքին անհամաձայնությունների կամ շրջապատում հղած դժգոհությունների արդյունք: Հայտնի է, որ արդեն 1904 թ. մայիսին Թիֆլիսում տեղի էր ունեցել ՌՍԴԲՊ Կովկասյան միության 3-րդ համագումարը, որտեղ քննարկվել էին տեղական կոմիտեների, Կովկասյան միութենական կոմիտեի և կուսակցության Կենտկոմի զեկուցումները՝ բանվորների, գյուղացիների և սովորողների մեջ կազմակերպվող պրոպագանդայի ձևերի ու մեթոդների, մարքսիստական գրականության տարածման վիճակի ու այդ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

1905 թ. դեկտեմբերի 24-ին մանկավարժական խորհրդում ճեմարանի վերատեսուչ Գարեգին վարդ. Հովսեփյանը զեկուցում էր, որ աշակերտները Դ., Ե. և Զ. դասարանցիներով միասին գրավոր «յառաջարկեն վարչության առնել ինչ, ինչ փոփոխություն ի ծրագրի և ի կանոնադրության ճեմարանիս»[13]: Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ նոր պրոպագանդայի ազդեցության արտահայտություն: Եթե անցյալ դարի 80—90-ական թվականներին ավելի մեղմ դեպքերի համար հնարավոր էին համարում միանգամից հեռացնել 68—70 աշակերտ, ապա այժմ ելք չգտնելով, աշխատում էին սովորողներին համոզել, թե վայելուչ չէ նման առաջարկներով դիմել դեկավարությանը, կարելի է բանավոր խոսել հուզող հարցերի մասին: Սոցիալ-դեմոկրատական գաղափարներին հետևող ուսանողների թիվը ճեմարանում գնալով ավելանում է:

Ճեմարանի մոտ 45-ամյա պատմության մեջ նշանավոր փաստաթուղթ է 1905 թ. դեկտեմբերի 21-ի պետիցիան, որով 33 ուսանողներ դպրոցի վարչությունից և վանական իշխանությունից պահանջում են մտցնել լիակատար բարեփոխումներ: Նրանք ներկայացնում են պարզապես մի նոր տիպի կանոնադրության թեզիսներ, որով ճեմարանը կդառնար իսկական ժողովրդական բարձրագույն դպրոց: Իրենց գրության մեջ ուսանողները նշել են, որ ճեմարանի նարդները, սովորությունները ու ուղղությունները միշտ երերուն դրության մեջ են, որ այդ կարգերից ու սովորություններից շատերը հնացած ու մաշված են:

Այդ գրության մասին պատկերացում տալու համար բերենք նրա 55 առաջարկություններից մի քանիսը. «Լսարաններում սահմանափակել կրոնական առարկաների թիվը, դասարաններում կրոնական առարկաների թիվն ու ժամերը պակասեցնել, դասարաններում մտցնել մանկավարժություն, դասարաններում լրացնել մաթեմատիկական և պատմական առարկաները, մինչև դ. դասարան դասերը լինեն աշխարհարար, դասարանցիք գոնե ե-ից սկսած ազատ լինեն քաղաքական այս կամ այն կուսակցության պատկանելուն, աշակերտները իրավունք ունենան պատելու իրենց թերթերը, ընկերական դատարանի գոյությունը աշակերտների մեջ ճանաչել օրինական, պան իսպառ վերացնել»[14]:

Առաջ քաշած հարցերը իրավական, մանկավարժական և գիտական իմաստով միանգամայն ճիշտ են ու առաջադիմական: Սա ճեմարանի պատմության մեջ առաջին մեծ նվաճումն է, մանավանդ, որ հիշյալ առաջարկությունների մեծ մասը ճեմարանի վարչությունը հարկադրված եղավ հետագայում իրականացնել:

Առաջադեմ աշակերտների գաղափարները համակրանք էին առաջացրել նաև որոշ դասախոսների մեջ: Դրանցից մեկն է Գարեգին Լևոնյանը, որը բացահայտ համակրանք և հարգանք էր տածում դեպի առաջադեմ ուսանողները: Ճեմարանի նախկին ուսանող, հին բոլշևիկ Դ. Հայկունին հիշում է, թե ինչպես Լևոնյանը ուսանողների անզգուշությունները հարթելու, հալածանքներից հեռու պահելու համար նրանց սովորեցրել է հետապնդումներից խուսափելու միջոցներ, մանկավարժական խորհրդի նիստերում առանց վարանելու պաշտպանել է ուսանողների շահերը: Ուսուցիչների և դասախոսների շրջանում իր առօրյա զրույցների միջոցով նա ստեղծել է

12 Նույն տեղում, թղթ. 7, վավ. 57, թղթ. 5։
13 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 27, վավ. 142։
14 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 57, վավ. 5։

համակրողներ ու նրանց գործունեությունը ուղղել հոգուտ սոցիալ-դեմոկրատական գաղափարների։

Արխիվում պահպանված տարբեր տարիների աշակերտական անձնական գործերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսանողներ Ռուբեն Դաշտոյանը, Գուրգեն Հայկունին, Արմենակ Քեթեկյանը, Աստքանազ Մոավյանը, Պետրոս Սարաճյանը, Երեմյա Բակունցը, Բենիամին Հարությունյանը, Առաքել Առաքելյանը, Թադևոս Ավդալբեկյանը, Եղիա Մուսելիմյանը, Տրդրան Սողոմոնյանը, Երվանդ Գարաղաշը, Մկրտիչ Մկրտումյանը, Նազարեթ Օլթեցյանը, Ենովք Մկրտումյանը, Աղասի Խանչյանը, Անաստաս Միկոյանը, Հայկազ Կոստանյանը և ուրիշ շատերը ճեմարանում սովորելու ժամանակ սոցիալ-դեմոկրատական գաղափարներ պրոպագանդելով, բավական մեծ ծառայություն էին մատուցում էջմիածնում բոլշևիկյան կորիզը ստեղծելու գործին։

1904—1907 թթ. ճեմարանի ղեկավարները որքան ցանկանում էին ուսանողներին հեռու պահել դրսի կյանքից, այնքան ավելի էր կապը ընդլայնվում արտաքին աշխարհի հետ, որքան ուսանողներին սեղմում էին ճեմարանի նեղ շրջանակներում, այնքան շատ ուսանողական ժողովներ ու ցույցեր էին տեղի ունենում։

Աշակերտության մեջ հեղափոխական պրոպագանդա մղելու և վարչության դեմ ըմբոստություն հրահրելու համար ուսանողներ Թադևոս Արիստակեսյանին, Աստքանազ Մոավյանին, Գառնիկ Քալաշյանին և Հարություն Սարգսյանին մանկավարժական խորհուրդը 1905 թ. սեպտեմբերի 23-ի նիստի որոշմամբ հեռացրեց ճեմարանից։ Այդ որոշման մեջ գրված է. «Ո՛ կամեն խնդրել գներողամտություն վարչության և մնան ի նմին ըմբոստության, ուստի և չեն արժանի կալ և մնալ ի շարաս սանոց ճեմարանիս»15։

Սակայն նրանց հեռացմամբ ճեմարանի վարչությունը չկարողացավ աշակերտությանը հեռու պահել հեղափոխական ազդեցություններից։ Սոցիալ-դեմոկրատական՝ սկզբնական շրջանի փոքրիկ խմբակը հետագայում դարձավ մի կազմակերպություն, որն իր շուրջը համախմբեց ճեմարանի առաջադեմ բոլոր ուսանողներին, դեպի իրեն ձգեց ուսանողության և դասախոսների դեմոկրատական մասին։ Այդ կազմակերպությունը կապ հաստատեց Վաղարշապատի հեղափոխական ինտելիգենցիայի հետ և 1906 թ. վերջերին ստեղծեց գաղտնի գրադարան, որը կրել է «Լույս» անունը։ «Լույսը» ստացել է սոցիալ-դեմոկրատական գրականություն և տարածել ուսանողության մեջ։

Հին բոլշևիկ Արմենակ Քեթեկյանի վկայությամբ գրադարանն ունեցել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի օրինակներ, որոնք ձեռքից ձեռք են անցկացել և ուսումնասիրվել։ «Լույսն» ուներ «Մայիսի 1-ը», «8 ժամյա բանվորական օր», «Սարդեր և ճանճեր» բրոշյուրների բազմաթիվ օրինակներ։ Ավելին, գրադարանը ստացել է նույնիսկ «Իսկրայի» համարները, ինչպես նաև Լենինի աշխատությունները և Մարքսի, Էնգելսի որոշ գործեր։

Հին բոլշևիկներ Գ. Հայկունին և Ա. Քեթեկյանը Վաղարշապատի ծխական դպրոցի տեսուչ Հայկ Հովակիմյանին և նույն դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Էմմա Աթարբեկյանին (Գևորգ Աթարբեկյանի քույրը), հիշում են որպես սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածողներ, որոնց հետ կարդացել են գաղտնի գրականություն։ Ռուսաց լեզվի ուսուցչուհին օգնել է նրանց «Կոմունիստական պարտիայի մանիֆեստի», Մարքսի, Էնգելսի, Լենինի առանձին աշխատությունների դժվարամարս դարձվածքները հայերեն ճիշտ թարգմանելու և մեկնաբանելու համար։

Ճեմարանի վարչությանը թեև լրիվ հայտնի չէին ուսանողության հեղափոխական գործունեությունները, բայց զգացվում էր, որ կատարվում է ինչ որ լուրջ բան։ 1907 թ. հունվարի 25-ին քննվում է մի խումբ ուսանողների, որոնց թվում Արմենակ Քեթեկյանի հարցը։ Որոշվում է՝ որպես վարչության դեմ ոտնձգություն կատարողների «հրեք աշակերտներին դպրոցից արձակել»16։

1907 թ. հունվարի 22-ին մանկավարժական խորհրդի քննարկման առարկան է դարձել ճեմարանից հեռացրած 2 աշակերտների (Վահրամ Փիլոյան, Վաղարշակ Աղեկյան) խնդիրը։ Ողջ ուսանողությունը և աշակերտությունը բաժանվել են երեք մասի։ Յուրաքանչյուր խումբ վարչությանը ներկայացրել է գրավոր բողոք։ Բողոքողների առաջին խումբը գտնում էր, որ հարկ չկա 2 ուսանողների հարցով երկար զբաղվել։ Երկրորդ խումբը մանկավարժական ժողովի որոշումը համարում էր անարդար և պահանջում վերստին ճեմարան ընդունել հեռացվածներին։

15 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 56, բաժին Դ., 472, 77—79։

16 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 56, թղթ. 27, վավ. 1173։

«Կամ նոքա մեզ հետ, կամ մենք նոցա հետ»[17].—ասված է բողոքագրում, որի տակ ստորագրել են 24 աշակերտներ։ Վերջում նրանք վճռարար հայտարարել են, որ իրենց «միայն սվիններով կարող են ճեմարանից դուրս քշել»[18]։

Մանկավարժական ժողովը հանգամանորեն վերլուծելով այս բողոքները, ձայների փոքրաքիվ մեծամասնությամբ (մեկ հոգու առավելությամբ) որոշում է հաստատել աշակերտների հեռացումը, միաժամանակ արձանագրելով՝ «որովհետև ավելի մեծ բարդություններ առաջ գալով, ճեմարանը կարող է վտանգվել, ցանկանալով շարունակել դպրոցական խաղաղ կյանքը և դաստիարակությունը միաձայն որոշեց և հանձնարարեց անդամներից երեքին պ. պ. Աբեղյանին, Օլթեցյանին և Լևոնյանին տեսակցել հուզված աշակերտների 3 խմբերից ընտրվածների հետ և աշխատել պարզել իրերի դրությունը, հայտնելով, որ մանկավարժական ժողովը պատրաստ է վեհափառ հայրապետից ներկայացուցիչ խնդրել՝ նշանակել մի քննիչ հանձնաժողով և քննել մանկավարժական ժողովի որոշումը»[19]։

Աշակերտների հետ բանակցությունների մեջ մտնող հանձնաժողովի կազմը բաղկացած էր այնպիսիներից, որոնք արդարամիտ լինելով հանդերձ, համակրում էին առաջադիմականներին։ Եթե ավելացնենք նաև որոշման մեղմ բնույթը, հասկանալի կլինի, որ հեռացումը ձևական էր. դա արված է նրա համար, որ վարչության հեղինակությունը միանգամից չոտնահարվի։

Հիշյալ դեպքից անմիջապես հետո աշակերտական ներկայացուցիչները կաթողիկոսին գրել են մի նամակ, որի մեջ դրել են փիլիսոփայություն դասավանդելու հարցը։ Անշուշտ, խոսքը վերաբերվում է նոր, մարքսիստական փիլիսոփայությանը, քանի որ իդեալիստական փիլիսոփայությունը վաղուց ուսուցանվում էր։ Նամակում շոշափված է նաև քաղաքատնտեսություն դասավանդելու խնդիրը։

Այս պայքարի արդյունքն այն եղավ, որ ուսումնական տարին դեռ չավարտված, 24 ուսանողներ հեռացան ճեմարանից։ Նրանք Թիֆլիսի Ավչարյան փողոցում վարձեցին շենք և հիմնադրեցին իրենց կոմունան։

1908 թ. ճեմարանի ուսանողության ռեակցիոն մասը ամեն կերպ ձգտում է ամբաստանության ենթարկել առաջադիմականներին։ Այսպես օրինակ. մարտի 6-ին պատարագի վերջում, մի խումբ ուսանողներ վերատեսուչ Բերբերյանին հայտնում են, որ 15 հոգի «սուրբ հաղորդությունը» ընդունելուց հետո խորանում թքել են հատակին և ոտքով տրորել, իսկ հաղորդության կտորտանքները հավաքել է Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանը»[20]։

Բերբերյանը այս բողոքը անհիմանալի է թողնում. նույն ուսանողները զեկուցում են նաև կաթողիկոսի տեղապահ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանին։ Հետաքննությունը թեև ոչինչ չի պարզում, մի քանի ուսանողների, որպես պարագլուխների պատժում են։

Ճեմարանում սովորողների շրջանում անհանդուրժողական տրամադրություն էին ստեղծել նաև կենցաղային վատ պայմանները։

1908 թ. ապրիլի 7-ին մանկավարժական ժողովում բժիշկը հայտնել է սակավարյունություն, սրտի արատ ունեցող աշակերտների թվի ավելացման, մասնայաբար տրախոմայով տառապելու, հանկարծամահության դեպքերի, մալարիայով հիվանդանալու և այլ համաճարակների մասին։ Նա իր եզրակացության մեջ դրա պատճառը համարել է «սննդի պակասը, հանրակացարանում եղած խիստ խտությունը, անմաքրությունը և այլն»[21]։

1912—1917 թթ. ճեմարանի կյանքում հանդիսացան հեղափոխական վերելքի, մարքսիստական գաղափարների ուսումնասիրման, տարածման, աշակերտական-ուսանողական բուռն շարժումների և ծրագրված նպատակների իրագործման բեղմնավոր տարիներ։ Աշակերտական նշարժումների սկզբնավորումը կարելի է համարել Մկրտիչ Մկրտումյանի, Կարո Ղազարյանի, Վահան Ռշտունու ըմբոստացումը Մեսրոպ վարդ. Մաքսուդյանի դեմ։ Մաքսուդյանը պարապում էր հունարեն լեզու։ Հասուն ուսանողները նկատում են, որ սա առարկան ուսուցանելու ժամանակ չի կատարում մանկավարժական պրպտումներ, ջանք չի թափում մատչելի և որակով դասավանդելու համար։ Այդ բանը ուսանողների մեջ դայրույթ է առաջացնում։ Դասի ժամանակ մի երեք ուսանողների և դասատուի միջև տեղի է ունենում լիճարանություն։ Վահան Ռշտունին ու

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

19 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 27, վավ. 179։

20 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 26, վավ. 190։

21 Նույն տեղում, թղթ. 27, վավ. 181։

դակի հայտարարել է. «Խնդրում ենք դուք մեր լսարան չգաք, քանի որ մեզ հետ չեք պարապում»22։

1913 թ. փետրվարի 28-ի, մարտի 7-ի, մարտի 12-ի ժողովներում քննվում է այդ 3 ուսանողների հարցը։ Առաջին ժողովում որոշվել է Մկրտումյանին, Ռշտունուն և Ղազարյանին հարկադրել, որ ներողություն խնդրեն։ Սակայն նրանք հրաժարվել են այն կատարել։ Երկրորդ անգամ է որոշվում՝ դարձյալ նրանք հրաժարվում են։ Երրորդ անգամ հարկադրելուց հետո միայն այդ աշակերտներից կիսատ-պռատ ներողություն է կորզվում։ Դրանից հետո միայն նրանց թույլատրվում է դասերին մասնակցել։

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հետագայում, աշակերտական և ուսանողական խռովությունները արտաքուստ կրել են վարչության կամ առանձին անձնավորությունների դեմ ուղղված դժգոհությունների բնույթ, բայց իրականում դրանք ունեցել են քաղաքական ազատություն ձեռք բերելու նպատակ։ Այդ բանը միանգամայն տեղին է դիտվել դեռևս 1914 թ. բոլշևիկյան «Խոսք» թերթում։ Թերթը 1914 թ. հունվարի դասադուլի մասին գրել է. «Այս խռովությունը ոչ առաջինն է և ոչ էլ վերջինն է լինելու, եթե իհարկե ամեն ինչ մնա էլի նույն դրության մեջ... եթե այսօր ճեմարանի ուսանողությունը բողոքում է, դասադուլ է հայտարարում, այդ չպետք է բացատրել շատ հասարակ կերպով, որ նա դժգոհ է այս կամ այն վարչական անձից, այլ որ նա՝ այդ ուսանողությունը, դժգոհ է տիրող կարգերից, ոգուց, որ ճեմարանական ներկա ոգին չի համապատասխանում նրա շահերին»23։

1916—1917 ուստարում իրերի վիճակը բոլորովին փոխվեց և տեղի ունեցող շարժումները կրեցին բացառապես հեղափոխական բնույթ, երբ ճեմարանում որպես ուսանողներ ընդունվեցին Անաստաս Միկոյանը, Արամ Շահդելդյանը, Հայկազ Կոստանյանը, Գառնիկ Ղազարյանը և ուրիշներ։ Նրանք ունեին հեղափոխական աշխատանքի զգալի փորձ և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելու ընթացքում հաճախակի կազմակերպել էին աշակերտական բողոքներ, ցույցեր։ Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո նրանք խորհրդակցում են իրենց դասընկերների հետ և բարձրագույն կրթություն ստանալու նպատակով որոշում գնալ Էջմիածին, սովորել Գեորգյան ճեմարանում։

Ճեմարանում գործող բոլշևիկները պայքարը ծավալում են երկու ուղղությամբ։ Մի կողմից լայն մասսայական աշխատանք են տանում հասարակության մեջ, կապ են պահպանում Հայաստանի և Անդրկովկասի բոլշևիկների հետ, հանդես են գալիս մամուլում, բանվորական վայրերում, զինվորական միավորումներում և մյուս կողմից աշքաթող չեն անում ուսանողության հետ տարվող աշխատանքը և ճեմարանի ներքին կյանքի բարեփոխումները։

Ճեմարանի նախկին ուսանողները՝ հին բոլշևիկները, իրենց հիշողություններում գրում են, որ իրենք ոչ միայն կարդում էին բոլշևիկյան մամուլը, աշխատակցում նրան, այլև այն տարածում էին ժողովրդի մեջ։ Գառնիկ Ղազարյանը գրել է. «Պայքար» թերթը մեզ շատ էր օգնում։ Մեր խմբակը սերտ կապ էր պահպանում Անդրկովկասի մարքսիստ ուսանողության և աշակերտության հետ։ Բավական է ասել, որ 1916 թ. Քութաիսում դումարված Անդրկովկասյան մարքսիստ ուսանողների միության առաջին կոնֆերանսին մասնակցեց նաև մեր խմբակի ներկայացուցիչ ընկ. Ա. Միկոյանը»24։

Մարքսիստ ուսանողները հեղափոխական աշխատանքները կազմակերպում էին բոլոր ճակատներում, իսկ անհրաժեշտության դեպքում, ուժերը կենտրոնացնում այնտեղ, որտեղ առավել պետք էր։ Ելնելով զարգացող դեպքերից, որոշում էին ամսվա, շաբաթվա և նույնիսկ օրվա խնդիրները։ Նրանցից շատերը կապված էին Երևանի երիտասարդ բոլշևիկների հետ և որոնց հանդիպելու համար հաճախ Երևան էին մեկնում՝ մոտակա անելիքները ուսումնասիրելու և դասախոսություններ լսելու25։

---

22 Նույն տեղում։ Հարկավոր է նշել, որ Մ. Արզումանյանը «Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին» խորագրով իր աշխատության մեջ ինչպես այս, այնպես էլ 1914 թ. հունվարի 8-ի դասադուլի հիմնական հեղինակներից մեկը համարել է 5-րդ (ե) դասարանի աշակերտ Ենովք Մկրտումյանին։ Հավանական է, որ հեղինակը Բ. լսարանի ուսանողներ Վահան Ռշտունու և Կարո Ղազարյանի դասընկերու գործակից Մկրտիչ Մկրտումյանի անունը շփոթել է Ենովք Մկրտումյանի հետ։ Դա պարզվում է ՀՍՍՌ ՊԿՊԱ 312 ֆոնդում պահպանված 1913 թ. փետրվարի 28-ի, մարտի 7-ի, 12-ի № № 9, 10 և 11 արձանագրություններից։ Այդ մասին վկայում են նաև Վ. Ռշտունին և Կ. Ղազարյանը։

23 «Խոսք», 1914 թ., փետրվարի 8, № 6։

24 «Հին բոլշևիկների հիշողությունները», I գիրք, Երևան, 1958, էջ 222։

25 Նույն տեղում, 2-րդ գիրք, էջ 827։

Բոլշևիկյան կազմակերպության անդամներից Ա. Միկոյանի և Ա. Շահգելդյանի գործունեությունը դուրս էր եկել դպրոցի սահմաններից և ստացել համաանդրկովկասյան նշանակություն։ Նրանք հոդվածներով հանդես էին գալիս բոլշևիկյան «Պայքար», Բաքվի՝ «Մեր օրեր», «Աշխատանքի դրոշակ», Թիֆլիսի՝ «Բանվորի կոիվ», «Նոր կյանք» և այլ թերթերում։

«1915—1916 թթ. էջմիածնում գործում էին բոլշևիկյան խումբ և ուսանողական մարքսիստական խմբակը։ Բոլշևիկյան խմբում մտնում էին Ն. Աթարբեկյանը, Ա. Հովհաննիսյանը, Զ. Աթարբեկովա-Մելիքը և ուրիշներ, իսկ մարքսիստական խմբակում՝ ճեմարանի աշակերտներ՝ Անաստաս Միկոյանը, Արամ Շահգալդյանը, Հայկազ Կոստանյանը, Գառնիկ Ղազարյանը, Արտակ Ստամբոլցյանը, Եղիշե Ներսիսյանը, Գերասիմ Աղասյանը, Գևորգ Թովմասյանը, Գևորգ Ղևոնդյանը, Արարատ Տեր-Հարությունյանը, Ժորժիկ Բաղդասարյանը և Հովհաննես Պողոսյանը»[26]։

Աշակերտության շրջանում բոլշևիկյան կուսակցության անդամների ծավալած բացատրական աշխատանքի արդյունքն էր աշակերտների կողմից ներկայացված բողոքագիրը, որը ճեմարանի պատմության մեջ հայտնի դարձավ նշանավոր «Թուղթ» անունով։ Աշակերտները պահանջում էին.

«1. Վերացնել պաշտոնական աղոթքը.

2. Նախավերջին և վերջին դասարանի աշակերտները իրավունք ունենան առանց թույլտվության, դպրոցական պարապմունքներից հետո, ազատ ժամերին, ճեմարանի տերիտորիայից դուրս գալ։ Մյուս դասարանի աշակերտները դարձյալ դուրս գալու իրավունք ունենան, միայն թե այդ մասին տեղյակ պահեն աշակերտական ներկայացուցչական խորհրդի անդամներին.

3. Մանկավարժական խորհրդում աշակերտները ունենան 6 ներկայացուցիչ, որից 3-ը դասարանական, 3-ը՝ լսարանական բաժիններից. դասարանական բաժնի 3-ից 2 հոգին ունենան վճռական ձայնի իրավունք.

4. Աշակերտական ներկայացուցիչ ունենալ նաև մատենադարանում.

5. Կազմակերպել տնտեսական խորհուրդ, որը բաղկացած լինի 2 աշակերտներից, 2 ուսանողներից և նույնքան էլ վարչության ներկայացուցիչներից»[27]։

«Թղթի» քննարկման ժամանակ մանկավարժական խորհրդում տարբեր հարցերի կապակցությամբ առաջանում են տարբեր կարծիքներ։ Պաշտոնական աղոթքի վերացմանը կողմնակից են Աշոտ Հովհաննիսյանը և Պողոս Մակինցյանը։ 1916 թ. հոկտեմբերի 19-ի մանկավարժական խորհրդի արձանագրությունից հայտնի է դառնում, որ կաթողիկոսը աշակերտների առաջարկները՝ մանկավարժական ժողովի հաստատմամբ ստացել է և մերժել։

Այսպիսով, լարված վիճակ է ստեղծվում 1917 թ. հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին։ Հոկտեմբերի երկրորդ կեսից մինչև նոյեմբերի վերջը, աշակերտները և ուսանողները անընդհատ պահանջներ են ներկայացնում, իսկ ճեմարանի վարչությունը և հոգևոր կառավարությունը զբաղվում են դրանց քննարկումներով ու պատասխաններով։

Հոկտեմբերի 25-ին աշակերտական ներկայացուցչական խորհուրդը նորից ուղարկում է թուղթ, որը բովանդակում է հետևյալ պահանջները. ներկայացուցչական խորհրդին հատկացնել սենյակ, աշակերտական խնդիրների լուծման համար հարաբերություն ունենալ խորհրդի հետ. եկեղեցի հաճախելը, եկեղեցական երգեցիկ խմբին մասնակցելը դարձնել կամավոր, աշակերտներին ազատել եկեղեցում կատարվող սպասավորությունից[28]։

1917 թ. հոկտեմբերի 30-ի, նոյեմբերի 1-ի և 5-ի մանկավարժական խորհրդի ժողովները, աշակերտական ցույցերը, դասադուլներն ու կաթողիկոսի դիվանատանը դումարված նիստերը, սենյակմեջ զբաղվում են աշակերտների պահանջների քննարկմամբ։ Կաթողիկոսը հարկադրված ընդունում է հետևյալ միջոցառումները.

«1. Քանի որ հանրական աղոթքի ժամանակ պատահում են ոչ պատշաճ երևույթներ, վերացնել այդ ձևի աղոթքը, դրա փոխարեն հաստատել դասարանական աղոթք ուսուցիչների ներկայությամբ.

2. Եկեղեցի հաճախել միայն կիրակի օրերը՝ պատարագին, որի ժամանակ երգեցիկ խմբում մասնակցել ժամերգությանը.

---

26 Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1958, էջ 192—193։

27 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 28, վավ. 435։

28 Նույն տեղում։

3. Տնտեսական խորհրդում ունենալ մասնակցություն և ճեմարանի վարչության հետ տնօրինել վանքի տված միջոցները»[29]։

Ինչպես տեսնում ենք, որոշ զիջումներ են կատարվել, բայց հիմնական հարցերը մնացել են անլուծելի։ Լուծված խնդիրներն էլ ամբողջական չեն, կան որոշ վերապահումներ՝ աղոթքի հանրային ձևը փոխարինվել է դասարանականով, կիրակի օրերին եկեղեցի գնալը մնացել է պարտադիր, երգեցիկ խմբին մասնակցելը պահպանվել է[30]։ Պահանջների այսպիսի կիսատ-պռատ կատարումը չէր կարող բավարարել ինքնագիտակցության հասած աշակերտությանը և դասախոսների առաջավոր մասին։ Աշակերտության և դասախոսական կազմի առաջադիմական մասի համառ ու տևական պայքարը պսակվեց հաղթանակով։

Մանկավարժական խորհուրդը, տեսուչը և առհասարակ ազդեցիկ շրջապատը կաթողիկոսին հորդորում են արագացնել ընդունած որոշումների վավերացումը։ Կաթողիկոսը համաձայնությունը տվեց այն ժամանակ միայն, երբ վրա էր հասել ճեմարանի պաշտոնական փակումը, այդպիսով ամեն ինչ մնաց անկատար։

1917 թ. դեկտեմբերի 20-ին դաշնակցական զինվորական հրամանատարությունը հատուկ գրությամբ կարգադրում է ազատել ճեմարանի շենքը։ Կաթողիկոսը շուտափույթ կերպով հանձնարարում է ճեմարանը փակել։ Դեկտեմբերի 21-ին տեղի է ունենում մանկավարժական խորհրդի վերջին նիստը, ուր որոշում են Զ. դասարանի աշակերտներին տալ դասարանական բաժնի, իսկ Ե. լսարանի ուսանողներին՝ լսարանական բաժնի ավարտական վկայականներ և ճեմարանը վերջնականապես լուծարքի ենթարկել։

Այսպիսով հայկական միակ բարձրագույն դպրոցը ապրեց իր վախճանը, բախտի քմահաճույքին թողնելով նախկին աշակերտներին, ուսանողներին և դասախոսական կազմի մեծ մասին։

* * *

Գեորգյան ճեմարանը հիմնադրվեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մի կողմից ընդարձակվում էր հայկական դպրոցների ցանցը, առաջադիմում էր հայ կուլտուրան, աճում հայ մտավորականությունը, իսկ մյուս կողմից ցարական բռնապետությունը թևակոխել էր ռեակցիոն հակառեֆորմների շրջան և արգելակում էր, ինչպես ոուս, այնպես էլ հայ մշակույթի ու դրպրոցական սիստեմի զարգացմանը։

Այսպիսի բարդ իրադրության պայմաններում ուժեղացավ հնի ու նորի, հետադիմության ու առաջադիմության, ռեակցիայի ու հեղափոխության հակադրությունը։

Ճեմարանը թեև գտնվում էր ծայրամասային գավառական փոքրիկ քաղաքում և հայ հոգևոր կենտրոնի անմիջական վերահսկողության տակ, հասարակական վերելքի, ազատագրական պայքարի և հեղափոխական շարժումների շրջանակից դուրս չմնաց։ Այնտեղ սովորող երիտասարդությունը սկսած նրա հիմնադրման առաջին տարիներից պայքարեց առաջադիմության համար։

Աշակերտության և ուսանողության հեղափոխական մասի գործունեությունը ճեմարանի շրջանակներից դուրս եկավ և դարձավ հայ բոլշևիկյան կուսակցության ծավալած պայքարի օրգանական մասը։

М. Г. Гамагелян

ПРОНИКНОВЕНИЕ ПЕРЕДОВЫХ ИДЕИ В ГЕОРГИЕВСКУЮ СЕМИНАРИЮ И РЕВОЛЮЦИОННЫЕ ВЫСТУПЛЕНИЯ УЧАЩИХСЯ

Резюме

Георгиевская семинария, основанная в Эчмиадзине, не только играла большую роль в создании национальных кадров, но и содействовала распространению идей марксизма-ленинизма, революционному воспитанию учащихся.

29 ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 312, թղթ. 28, վավ. 431, թուղթ 29։

30 Նույն տեղում։

До 1878 г. после своего основания, семинария действовала более или менее нормально. Однако тяжелые условия учебы, антипедагогические действия многих педагогов, репрессии со стороны управления семинарии и местных властей привели к революционным выступлениям учащихся. Первое выступление имело место в феврале 1878 г.

Революционные выступления учащихся Георгиевской семинарии были связаны с тем, что бывшие выпускники семинарии, продолжая учебу в центральных городах России, университетах Европы и особенно в Германии, возвращались на родину в Эчмиадзин в качестве преподавателей семинарии, привозя с собой передовые идеи, которые передавали учащимся.

Выступления учащихся в 1916—1917 гг. приняли исключительно революционный характер, когда в семинарию поступили учиться А. Микоян, А. Шахгелдян, А. Костанян, Г. Казарян и другие.